# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԲՌՆԱԿՈԹ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Սյունիքի մարզ, գ.Բռնակոթ, հեռ. 0283-61414

"25" ապրիլ 2016թ. №4

Հայաստանի Հանրապետության
Սյունիքիմարզպետ
Ս.Խաչատրյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ են ներկայացվում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Բռնակոթ գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 21-ի N 16Ա 17 Ա 18Ա որոշումները:

Առդիր՝ թերթ:

Հարգանքով՝ Ա.Առաքելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՌՆԱԿՈԹ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ապրիլ 2016թ    թիվ 16 Ա

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՌՆԱԿՈԹ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 12-րդ և 15-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝

որոշման նախագծի քվեարկության արդյունքներով.

4 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ

*ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՌՆԱԿՈԹ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

**հաստատել համայնքի ավագանու հերթական նիստի հետևյալ օրակարգը:**

1. Բռնակոթ համայնքի ոռոգման ջրագծի ներքին ցանցի կառուցման եվ վերանորոգման աշխատանքները իրականացնելու համար «ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԻԳ» ՊՀ-ԻՆ առաջարկ ներկայացնելու մասին:

2. Համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը եվ նոր գույքացուցակը հաստատելու մասին:

Կողմ՝ ______________ Սարգսյան Արմեն
Կողմ՝ ______________ Բալասանյան Գագիկ
Կողմ՝ ______________ Առաքելյան Սեյրան
Կողմ՝ ______________ Շահնազարյան Արմեն

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Բռնակոթ գյուղական համայնքի ղեկավար    Ա.Առաքելյան

21 ապրիլ 2016թ. գյուղ Բռնակոթ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՌՆԱԿՈԹ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ապրիլ 2016թ

թիվ 17Ա

# ԲՌՆԱԿՈԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱԳԾԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ «ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԻԳ» ՊՀ-ԻՆ ԱՌԱՋԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ կետով որոշման նախագծի կողմ՝ 4, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 քվեարկության արդյունքներով Համայնքի ավագանին որոշում է

**1.** Առաջարկ ներկայացնել «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» ՊՀ-ին, Բռնակոթ համայնքի ոռոգման ջրագծի ներքին ցանցի կառուցման և վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

**2.** Տալ համաձայնություն, ոռոգման ջրագծի ներքին ցանցի կառուցման և վերանորոգման աշխատանքներ իրականացնելու դեպքում հետագա շահագործման և սպասարկման համար ոռոգման համակարգը հանձնել «Սիսիան» ՋՕԸ-ին:

**3.** Տալ համաձայնություն, Բռնակոթի ոռոգման ջրագծի ներքին ցանցի կառուցման և վերանորոգման աշխատանքներ իրականացնելու դեպքում համայնքի կողմից կատարվելիք անհրաժեշտ ներդրումն ապահովելու համար:

Կողմ՝ ________________ Սարգսյան Արմեն
Կողմ՝ ________________ Բալասանյան Գագիկ
Կողմ՝ ________________ Առաքելյան Սեյրան
Կողմ՝ ________________ Շահնազարյան Արմեն

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Բռնակոթ գյուղական համայնքի ղեկավար Ա.Առաքելյան

21 ապրիլ 2016թ. գյուղ Բռնակոթ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՌՆԱԿՈԹ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ապրիլ 2016թ                                                                                   թիվ 18 Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐ ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապ ետության օրենքի 50-րդ հոդվածի 4 -րդ մասով և 46-րդ հոդված երրորդ պարբերության պահանջներով Բռնակոթի գյուղական համայնքի ավագանին կողմ՝ 4, դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 0 որոշում է.

1. Հաստատել Բռնակոթ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը համաձայն հավելված 1-ի:

Կողմ՝ ________________ Սարգսյան Արմեն
Կողմ՝ ________________ Բալասանյան Գագիկ
Կողմ՝ ________________ Առաքելյան Սեյրան
Կողմ՝ ________________ Շահնազարյան Արմեն

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Բռնակոթ գյուղական համայնքի ղեկավար                                    Ա.Առաքելյան

21 ապրիլ 2016թ. գյուղ Բռնակոթ

Հավելված 1

Հաստատում եմ _______ Ա.Առաքելյան

21.04.2016թ

| Հ.Հ. | Գույքի անվանումը | Չափի միա-վորը | Քանակը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| | Համայնքի ղեկավարի աշխատասենյակի գույքը | | | |
| 10 | ՀՀ Սյունիքի մարզի Բռնակոթ համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգ( ներառյալ 423մ խողովակաշար, 4 խմոց, 2 ջրընդունիչ, 1բաք) | հատ | | 30562496,0 դրամ |